# Քրիստոնյա Հայաստան

2006, ՍԵՊՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 18 (230)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


**ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

## Շքանշանի հանձնման արարողություն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհված «Բարեկամության շքանշանի» հանձնման հանդիսավոր արարողությունը: Հանդիսությանը ներկա էին Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, Մայր Աթոռի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ, պետական այրեր, գիտության ու մշակույթի գործիչներ:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանը՝ ընդգծելով հանդիսության յուրօրինակությունը. Նորին Սրբությունը, ով սովորաբար պարգեւաբաշխումներ է կատարում



Վեհարանի հարկի ներքո, այս անգամ ինքն է պարգեւատրվում: Գերաշնորհ սրբազանն անդրադարձավ նաեւ հայ-ռուսական հարաբերությունների սերտացման գործում Նորին Սրբության ջանքերով արձանագրված ձեռքբերումներին:

Այնուհետեւ ելույթ ունեցավ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Նիկոլայ Պավլովը: *«Ձերդ Սրբության հովվապետությամբ Եկեղեցու հոգեւոր եւ հասարակական առաքելության իրագործումն արժանիորեն խորին երախտագիտությամբ է գնահատված Ձեր հոտի եւ Հանրապետության հանրության կողմից... Մենք կցանկանայինք առանձնացնել Ձեր ակտիվ գործունեությունը՝ ուղղված Ռուսաստանի եւ Հայաստանի ժողովուրդների բարեկամության ավանդական հարաբերությունների եւ միմյանց հանդեպ սրտաբուխ կապվածության պահպանմանը, երկու պետությունների միջեւ փոխշահավետ դաշնակից փոխգործակցության ամրապնդմանը»*,- եւ անդրադարձավ նաեւ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գործունեությանը Ռուսաստանի հայ համայնքում, նոր եկեղեցիների կառուցմանը, հոգեւոր ու մշակութային կենտրոնների հաստատմանը՝ այդ ամենում տեսնելով Նորին Սրբության անմիջական կարեւոր ներդրումը: *«Ձեր բազմակողմանի եւ արդյունավետ գործունեության այս համառոտ ներկայացումը եւս մեկ անգամ ընդգծում է, որ Ձեր ավանդը իրավացիորեն գնահատվել է Ռուսաստանի կողմից»*,- ավելացրեց ՌԴ դեսպանը: Իր խոսքից հետո դեսպան Պավլովը Ամենայն Հայոց Հայրապետի կուրծքը զարդարեց «Բարեկամության շքանշանով» եւ հանձնեց շքանշանի վկայականը:

Հանդիսության ընթացքում շնորհավորական խոսքով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմեց Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը՝ անդրադառնալով հայ-ռուսական բարեկամությանը եւ այդ դարավոր բարեկամության սերտացման գործում Հայոց Հովվապետի կարեւոր ներդրմանը. *«Հայ-ռուսական բարեկամությունը սովորական հասկացողությամբ բարեկամություն չի եղել, այլ բարեկամություն, որ իր զանազան արտահայտություններն է ունեցել երկու ժողովուրդների քաղաքական, տնտեսական, հոգեւոր, ընկերային եւ այլ մարզերից ներս:*

*....Հայ-ռուսական բարեկամությունը անցյալ չէ, այլ նաեւ ներկա ու մանավանդ ապագա»*: Հայ-ռուսական դարավոր բարեկամության ամրապնդման սերտացման գործում աղոթավոր Աստված Նորին Սրբությանը Արամ Ա-ն մաղթեց Վեհափառ Հայրապետին երկար արդյունաշատ գահակալություն՝ իր ազգաշեն, հայրենաշեն եւ եկեղեցաշեն գործունեության համար:

Ապա Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհակալությունը հայտնեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ շնորհված բարձր պարգեւի համար եւ ՌԴ դեսպանին՝ շքանշանի հանձնման համար. *«Ժողովուրդների բարեկամության» այս պարգեւը մենք ընկալում ենք որպես պարգեւ՝ տրված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Եկեղեցի, որ դարեր շարունակ խնամել է նախանձախնդրորեն բարի հարաբերությունները ռուս ժողովրդի եւ ռուս իշխանությունների հետ: ....Այս պարգեւը մենք ընկալում ենք նաեւ պարգեւ՝ ընծայված մեր ժողովրդին, որ դարեր շարունակ եղբայրաբար ապրել, աշխատել, մաքառել է ռուս ժողովրդի հետ միասին»*,- ասաց Վեհափառն իր խոսքում՝ նշելով նաեւ, որ Ամենայն Հայոց բազմաթիվ Հայրապետներ բազմիցս պարգեւատրվել են ինչպես ցարական, այնպես էլ խորհրդային իշխանությունների կողմից: Արժեւորելով երկու ազգերի հետզհետե ամրագրվող սերտ հարաբերությունների շարունակական ընթացքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց բազում հայորդիների՝ Ռուսաստանի կյանքի տարբեր մարզերում ունեցած կարեւորագույն դերն ու նշանակությունը:

Վեհափառ Հայրապետը նաեւ նշեց, որ երկու ժողովուրդների բարեկամության ոգուն համարժեք ու համապատասխան զարգանում են նաեւ սերտ կապերը Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ, եւ իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբություն Ալեքսի Բ-ին՝ հանուն ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ներդրած իր միջնորդական ջանքերի համար:Ռուսաստանի նախագահի շնորհած պարգեւը համալրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախկինում շնորհված բազում պետական եւ հասարակական պարգեւների շարքը, որոնց թվում են Հորդանանի բարձրագույն «Բեթղեհեմ-2000» շքանշանը, «Ռումինիայի աստղ» Ռումինիայի ազգային բարձրագույն պարգեւը (2000 թ.), Ուկրաինայի Հանրապետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» շքանշանը (2001 թ.), Ֆրանսիայի «Պատվո լեգեոնի կոմանդոր» շքանշանը (2001 թ.), Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարգեւ՝ «Ս. Անդրեաս Նախակոչ առաքյալ» շքանշանը (2004 թ.), «Դարի բարեգործներ» միջազգային բարեգործական հիմնադրամի «Սուտակե խաչ» շքանշանը (2005 թ.), ՌԴ հասարակական բարձրագույն պարգեւ՝ «Ռուսաստանի հպարտություն» ոսկե շքանշանը (2006 թ.):

Հանդիսությունը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

Արարողության ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդես եկավ Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

## «Հրաշափառի» արարողություն՝ Մայր տաճարում



Սեպտեմբերի 16-ին՝ վաղ առավոտյան, Ավստրալիա եւ Ղազախստան կատարած հայրապետական ուղեւորությունից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադարձավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբանների ուղեկցությամբ՝ մասնակցելու «Հայաստան-Սփյուռք» երրորդ համաժողովին եւ Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին նվիրված միջոցառումներին:

Միածնաէջ տաճարի զանգերի ղողանջների ներքո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններից եւ արտերկրից ժամանած եկեղեցականներից կազմված հանդիսավոր թափորով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն առաջնորդվեցին Մայր տաճար:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ կատարված սաղմոսերգության եւ գոհաբանական աղոթքի արարողությունից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարիգալստյան խոսքով դիմեց ներկաներին՝ ուրախություն հայտնելով Մայր Աթոռում Արամ Ա Կաթողիկոսի, իրեն ուղեկից հոգեւոր դասի, ինչպես նաեւ տարբեր երկրներից ժամանած թեմակալ առաջնորդների ներկայության համար եւ ողջունելով «Հայաստան-Սփյուռք» երրորդ համաժողովին եւ Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու նրանց առաքելությունը:

*«...Երկու կարեւոր միջոցառումներ են, որոնք կոչում են աշխարհասփյուռ հայոց ազգին համախմբվելու, միասնական ոգով եւ միասնական կամքով շարունակելու իրենց նվիրյալ ծառայությունը՝ իրագործելու համար մեր հայրերի նվիրական եւ սուրբ տեսիլքը՝ ազատ եւ հզոր Հայրենիքի կերտման:*

*Մենք գոհունակ սրտով հաստատում ենք, որ անցնող 15 տարիներին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամողջանվեր կերպով իր ծառայությունն է բերել Հայրենիքում եւ Սփյուռքում այս կարեւոր նպատակի համար՝ Սփյուռք-Հայրենիք մերձեցման եւ անկախ մեր պետության զորացման համար»*,- ասաց Նորին Սրբությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսը, ուրախություն հայտնելով Սուրբ Էջմիածնում գտնվելու համար, այս առիթով իր ապրումները փոխանցեց ներկաներին.

*«Մեր ժողովրդի զավակները եւ մենք պետք է միշտ մեր մտքի, մեր հոգու ու մեր կյանքի մեջ անջնջելի կերպով ունենանք, հիշենք, մտաբերենք այն պատմական իրողությունը, թե Աստված մեր ժողովրդի հետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ճամփով, այս տաճարի ճամփով խոսեց: Էջմիածինը Միածնաէջ տաճար է: Աստված մեր ժողովրդի կյանքի մեջ իջավ, մեր ժողովրդի հետ երկխոսության մեջ մտավ այս տաճարի ճամփով: Հետեւաբար՝ լինել Սուրբ Էջմիածնին մեջ՝ մեզ համար սովորական եկեղեցու մեջ լինել չի նշանակում, այլ մեր պապերի հետ, մեր սուրբերի հետ, մեր հայրապետների հետ, մեր նահատակների հետ, այլ խոսքով՝ մեր կենդանի պատմության մեջ լինել: Լինել Սուրբ Էջմիածնի մեջ՝ մեզ համար նշանակում է մի քիչ ավելի հայանալ, մի քիչ ավելի մեր քրիստոնեական հավատքի մեջ զորանալ»:*

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրեց ամենքին Տերունական աղոթքով հայցելու Բարձրյալ Տիրոջ ողորմությունը՝ հանուն աշխարհի խաղաղության, աշխարհասփյուռ հայ ժողովրդի բարօրության եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անսասանության:

Տե՛ս էջ 2

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

## (1113-1166)

Բուն Հայաստանի կողմերում եւս փայլեցին բազմաթիվ վարդապետներ: Նշանավոր էր Հաղպատի առաջնորդ եւ արքեպիսկոպոս Սարգիսը՝ Կյուրիկեի արքունիքի ավագերեցը: Նրան հաջորդեցին Գեւորգը, Բարսեղը, Գրիգորիսը, որ ազգական էր Օրբելյաններին, Հովհաննեսը, որ Խաչենի իշխանների ազգականն էր, Իվանեի քեռորդի Հովհաննեսը, Հովհաննես Մածնաբերդցին եւ Համազասպ Անեցին: Հովհաննես Խաչենցին նույնանում է Հովհաննես Փառիսոսցու հետ, որը կոչվել է նաեւ Սարկավագ եւ մեծ գործ է կատարել տոմարի կարգավորման հարցում: Նա գրել է նաեւ պատմություն, որը սակայն մեզ չի հասել: Գրել է նաեւ տոմարական եւ համարողական աշխատանքներ, ներբողյաններ, շարականներ, տաղեր եւ այլն, որոնց մեծ մասը նույնպես մեզ չի հասել: Նա մահացել է 1129 թվին եւ թաղվել Հաղպատի փոքր եկեղեցու արեւելյան կողմում: Հայտնի էին նաեւ Դավիթ Ալավկորդին, որը դատաստանագիրք կազմելու փորձ կատարեց, Գրիգոր Գանձակեցի Թոքակերորդին, Անանիա Սանահնեցին, մատենագիր Սամվել Անեցին եւ ուրիշներ:

Մեծ հռչակ ձեռք բերեց Պողոս Տարոնեցի վարդապետը, որը վերջում Տիրինկատարի Առաքելոց վանքի առաջնորդը դարձավ եւ թաղվեց նույն վանքում: Նա բուռն պայքար է մղել երկաբնակության եւ հունադավան Եկեղեցու դեմ: Նրան հատկապես գրգռել էր Թեոփիստե անունով հայերենագետ հույն հռետորը՝ իր Հայոց Եկեղեցին քննադատող գործերով: Նա անգիջում էր բանակռվի մեջ, եւ այդ պատճառով նրան կոչել են Հայաստանում հայտնված երկրորդ լուսավորիչ: Միայն Մ. Չամչյանն է, որ ցավով նշում է, թե նրա աշխատությունները փոխանակ այրելու՝ հրատարակել են Կոստանդնուպոլսում: Սակայն նա պայքարում էր ոչ թե հռոմեադավանների, այլ հունադավանների դեմ, ուստի պետք չէր, որ Մ. Չամչյանը պաշտպանության տակ առնի Թեոփիստեին: Նա մահացավ 1123-ին:

Մատթեոս Ուռհայեցին՝ մեր նշանավոր մատենագիրը, բնիկ ուռհայեցի էր, եւ նրա՝ իրոք որ արժեքավոր աշխատությունը, որ նվազ ու անկատար գիտելիքներ է պարունակում բուն Հայաստանի վերաբերյալ, շատ առատ է Եդեսիայի կամ Ուռհայի վերաբերյալ մանրամասնություններով: Նա իր պատմությունը հասցնում է 952-ից մինչեւ 1136 թիվը: Աշխատությունն իր բնույթով ժամանակագրություն է, որը շարունակել է Գրիգոր երեց Քեսունցին՝ տալով 1137 թվից մինչեւ 1162 թվականի պատմությունը: Գրիգոր Քեսունցին պահպանել է Ուռհայեցու լեզուն եւ ոճը:

Երկար ժամանակ հայ պատմագիրները ոչինչ չէին հայտնում մարտիրոսների մասին, թեպետ խմբովին նահատակների մասին հիշատակներ պահպանվել են: Իսլամը մահվան էր դատապարտում միայն նրանց, ովքեր ետ էին կանգնել մահմեդականությունից, բայց ոչ երբեք՝ իսլամը չընդունողներին: Սակայն այդ ձեւն ի հայտ եկավ Գոհարինյանց մարտիրոսություն անունով:

Սեբաստիայից իշխանավոր Դավիթը գերության մեջ իսլամ է ընդունում իր անդրանիկ որդու հետ, որի անունն էր Արեւ: Սակայն նրա կինը քրիստոնյա էր մնացել եւ չորս մանկահասակ երեխա ուներ, որոնց անուններն էին Գոհարինոս կամ Գոհարմելիք, Ռատիկոս կամ Ռատիոս, Ծամիդոս կամ Ծամիդես եւ Տուքիկոս կամ Տունկիոս: Չափահաս դառնալով՝ որպես քրիստոնյա՝ զինվորագրվում են Սեբաստիայի բանակում, մինչեւ որ բացահայտվում է, որ նրանք իսլամացած հոր զավակներ են: Նրանց համարում են իսլամությունից հրաժարվածներ, եւ հարցաքննության են ենթարկվում Ալիբաս իշխանի կողմից: Իսլամացած եղբայրը, չթողնելով, որ եղբայրները խոսեն, հայտարարում է, որ նրանք եւս իսլամ են: Եղբայրներին բաց թողեցին, բայց սրանք չուզեցին իսլամացած համարվել: Ռատիկոսն անգամ Ս. Նշանի վանքը մտավ, եւ ինչպես նա, մյուս եղբայրները նույնպես չծածկեցին իրենց քրիստոնյա լինելը եւ դատի ենթարկվեցին՝ կրկին Ալիբասի կողմից: Եղբայրները խոշտանգումների ենթարկվեցին, սակայն նրանք չհրաժարվեցին քրիստոնեությունից, որի համար մահապատժի ենթարկվեցին: Այդ դեպքը կատարվեց 1156 թվի հունվարի 28-ին: Գոհարինեի որդի Թեոդորոսն էլ աբեղա էր դարձել: Նրան նույնպես ամբաստանեցին եւ խոշտանգումների ենթարկեցին, ստիպեցին ուրանալ քրիստոնեությունը, սակայն ոչնչի չհասնելով՝ նրան սպանեցին՝ մարմինը երեք կտոր անելով: Այս դեպքն էլ տեղի ունեցավ 1156 թվի հունիսի 22-ին, այսինքն՝ հոր նահատակությունից հինգ ամիս անց:



Այդ ժամանակներում է դնում Վարդան պատմիչը Հովսեփ Դվնեցու վկայությունը: Սա ազգությամբ պարսիկ մահմեդական էր, բայց քրիստոնյա մոր որդի: Նա Դվնի Նորաշենք գյուղից էր եւ շփվելով քրիստոնյաների հետ՝ ընդունում է քրիստոնեությունը՝ մկրտվելով Հովսեփ անունով: Նա ուխտի է գնում Երուսաղեմ, հետո հանդիպում է Հռոմկլա եւ վերադառնալով ու հորը մահացած գտնելով՝ հաստատվում է իր քրիստոնյա մոր մոտ: Դվինի ամիրան, իմանալով այդ, փորձում է նրան վերադարձնել իսլամության գիրկը եւ ոչնչի չհասնելով՝ նրան մահապատժի է ենթարկում 1167 թվի դեկտեմբերի սկզբներին: Նրա մարմինը հողին է հանձնվում Գառնիից ոչ հեռու գտնվող Հավուցթառի վանքում:

Այդ ժամանակ էլ մարտիրոսանում է Խոսրով Գանձակեցին, որը Հայոց Արեւելից կողմերի Արյանաշեն գյուղից էր: Հարեւան այլազգի մի աղջիկ, եղբոր հետ շնանալիս, հղիանում է, եւ հղիությունը բացահայտվելիս՝ մեղադրում է Խոսրովին, որը նրա իրապույրներին չէր պատասխանել: Խոսրովին ստիպում են մահմեդականանալ, սակայն նա չի համաձայնվում եւ 1167 թ. հունվարի 10-ին (ավելի հավանական է՝ հուլիսի 10-ին) նահատակվում է քարկոծմամբ:

Իր քրիստոնեասիրությամբ աչքի է ընկել Գեւորգ Արճիշեցին, որն ի ծնե կույր էր եւ դրա համար ստացել էր Աչիկա մականունը, այսինքն՝ աչք չունեցող: Նա երիտասարդ հասակից ճգնում է իր Գրիգոր անունով ընկերոջ հետ: Հետո նրանք միասին ուխտի են գնում Երուսաղեմ, Հռոմ եւ Կոմպոստելլա: Երուսաղեմից ցամաքով Հռոմ գնալիս՝ նրանք Հունգարիայում ենթարկվում են ավազակների հարձակմանը, որոնք նրանց վիրավորում են: Մի կրոնավոր նրանց գտնում եւ վանք է տանում, որտեղ նվաղած Գրիգորը Գեւորգի աղոթքներով կենդանանում է, եւ ընկերները, ուխտը վերջացնելով, վերադառնում են հայրենիք: Նրանք հաստատվում են Անիի կաթողիկոսի մոտ, եւ Գեւորգն իր հրաշքներով մեծ հռչակ է ձեռք բերում: Շատ չանցած, թվականը ճշտված չէ, նա մահանում է ահեկան ամսի 27-ին, որ համապատասխանել է մայիսի 4-ին:

Հիշյալ ժամանակաշրջանում հիշվում է Ավետ անունով հայ քահանան, որը բնակվում էր Միջագետքի սահմանակից քաղաքներից մեկում, որի անունը չի հիշվում: Սովի ժամանակ նա ջաղաց տարած ցորենը բաժանում է սովահարներին եւ անգամ էշն ու ունեցածն էլ վաճառում է, որ նրանց հոգսերը հոգա, իսկ ինքն իրեն ճգնավորության է նվիրում՝ շրջագայությունների ընթացքում որբերի եւ այրիների համար նպաստ հավաքելով: Հարավային Հայաստանում այդ ժամանակ իշխած Շահարմեն ամիրան խնդրում է նրան իր համար աղոթել, եւ քանի որ Ավետը միշտ հանդիմանում էր պոռնիկ քահանաներին, վերջիններս նրանից վրեժ են լուծում՝ մեղադրելով ամիրայի առաջ, թե նա բյուզանդական լրտես է: Նրանք համոզում են Շահարմեն ամիրային, որի հրամանով Ավետ քահանան ենթարկվում է քարկոծման: Սակայն քարկոծման տեղում մինչեւ երեք օր լույս է երեւում, եւ դրանից զգացվելով՝ ամիրան կարգադրում է պատվով հողին հանձնել նրա ոսկորները:

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ 2005-ի թիվ 11-12, 15-18, 20-22, 24, 2006-ի թիվ 1-5, 11-17*

## ՍԻՐԵՑԵՔ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

Ավետարանում Քրիստոսը Երկնքի արքայությունը նմանեցնում է մարգարտի: Սրբերը եւս նման են մարգարիտների: Մարգարիտն ընդհանրապես իր փայլն ու թանկարժեք հատկությունը չի կորցնում նույնիսկ փոշու մեջ: Այն ամեն տեղ էլ մնում է իբրեւ թանկարժեք քար: Նույն կերպ էլ սրբերը. նրանք կյանքի բոլոր իրադրություններում էլ եղել են իրապես մաքուր մարդիկ: Մենք եւս ցանկացած իրավիճակում մեզանից հեռու պետք է վանենք ատելությունը, վրեժխնդրությունը, սեփական անձի մասին չափազանց բարձր կարծիքը եւ բոլոր բացասական զգացումները, այսինքն՝ պետք է նմանվենք մարգարտի, որն իր հատկությունը պահպանում է նույնիսկ փոշու եւ ցեխի մեջ: Այսպես վարվելով՝ գուցե կհասկանանք Քրիստոսի այն խոսքերը, որոնք շատ մարդկանց համար դժվարըմբռնելի են. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարիք արեք ձեզ ատողներին եւ աղոթեցեք նրանց համար, ովքեր ձեզ չարչարում են եւ հալածում»:

## ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեռուստադիտողն առաջին հերթին ցանկանում է հաճելի եւ հետաքրքիր ժամանակ անցկացնել էկրանի առջեւ: Բազում մարդիկ փնտրում են միայն ֆիլմեր, ոմանք՝ նորություններ, մի մասն էլ՝ երաժշտություն: Բայց այն փաստը, որ դուք մի պահ կտրվում եք դրանցից՝ հետեւելով հոգեւոր հաղորդումների, վկայում է այն մասին, որ դուք կարողանում եք արժեւորել ոչ միայն անցողիկն ու կարճատեւ հաճույքը, այլեւ վեհ գաղափարները: Մենք մեր երեխաներին ցանկանում ենք միշտ տեսնել ազնիվ ու առաքինի, սակայն խոսքերը հաճախ իրենց ազդեցությունը չեն թողնում: Մինչդեռ այս մի պարզ արարքով նաեւ մեր երեխաներին սովորեցնում ենք հետեւել ոչ թե այն ամենին, ինչ ցուցադրվում են շատ ֆիլմերում, այլ դրանցից վեր դասել վեհ գաղափարներն ու հետեւել դրանց: Սրբերի մասին գիտելիքը մարդկանց մեջ ինչ-որ չափով ձգտում է արթնացնում նրանց նման առաքինի եւ սուրբ լինելու:

## ՍԻՐՈ ՏՈՆ

Փետրվարի 14-ին Տյառնընդառաջի կամ քառասնօրյա մանուկ Քրիստոսի՝ տաճարին ընծայման



տոնն է: Այս տոնը մեր ժողովրդի կողմից ամենասիրված կրոնական տոներից մեկն է, որն աչքի է ընկնում իր գեղեցիկ եւ յուրահատուկ արարողություններով: Սակայն արդեն մի քանի տարի է, ինչ մեկ այլ օտարամուտ տոն կարծես թե փորձում է ստվեր գցել Աստծուն նվիրված տոնախմբության վրա: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է նույն՝ փետրվարի 14-ին հիշատակվող սուրբ Վալենտինի օրվան, որը հայտնի է նաեւ որպես սիրահարների օր: Այդ օրը հեռուստատեսությունն ու ռադիոն մեծ ոգեւորությամբ գովազդում են սուրբ Վալենտինի տոնը, ինչպես նաեւ դրանց միջոցով սիրահար երիտասարդներն ու երիտասարդուհիները շնորհավորում են միմյանց՝ սիրահարների ցնծալից տոնի առիթով: Ցավոք, այդ բազում խոսքերի ու շնորհավորանքների մեջ հաճախ ոչ մի ակնարկով անգամ չի հիշատակվում Քրիստոսին՝ Աստծուն նվիրված տոնը: Եվ սրա պատճառը ոչ այնքան օտարամուտ տոնն է, այլ այն ցավալի իրողությունը, որ հատկապես մեր երիտասարդների գիտակցության մեջ (իհարկե, չհաշված գեղեցիկ բացառությունները) տեղի է ունեցել արժեհամակարգի խախտում: Այն արժեքները, որոնք իրականում պետք է ամենից առաջնային լինեին, այսօր շատերի համար գրավում են վերջին՝ աննկատ տեղերը կամ էլ ընդհանրապես ջնջվել են եւ դուրս նետվել գիտակցությունից: Մերօրյա բազում երիտասարդների արժեհամակարգում առաջին տեղը գրավում է սեփական հաճույքը, մինչդեռ Աստծո մասին գաղափարը պատված է անտարբերության մշուշով: Փորձենք հարցնել փողոցում հանդիպած ցանկացած երիտասարդի, թե երբ է վերջին անգամ Աստվածաշունչ կարդացել եւ երբ է վերջին անգամ դիտել արեւմտյան աշխարհից եկած կրքահարույց ֆիլմերն ու երաժշտական տեսահոլովակները, եւ այս երկու հարցերի պատասխանների համեմատությունից կտեսնեք, թե ինչն է նրանց ավելի շատ հետաքրքրում, եւ ինչպիսին է նրանց վերաբերմունքն աստվածայինի հանդեպ: Եթե փետրվարի 14-ին երիտասարդն իր ընկերուհուն որեւէ նվեր չտա, ապա դա ամոթ կլինի. ինչպե՞ս կարելի է սիրահարների տոնի օրը գեղեցիկ անակնկալ չմատուցել սիրեցյալին, բայց եթե այդ օրը եկեղեցի չայցելեն կամ Աստծուն չհիշեն, ապա դա այնքան էլ ողբերգական բան չէ: Մինչդեռ Աստված պատվիրել է, որ մարդիկ ամենից շատ Իրեն սիրեն: Երկնային արժեքների հանդեպ երիտասարդության մեջ տիրող անտարբերությունն է պատճառը, որ Սուրբ Սարգիսը շատ երիտասարդների հայտնի է միայն աղաբլիթով եւ ալյուրի վրա թողած ձիու պայտի նշանով, իսկ եկեղեցին՝ մոմ վառելով: Քիչ թիվ չեն կազմում այն մարդիկ, ովքեր Աստծուն պատկերացնում են հեռու երկնքում նստած մի ծերունու կերպարանքով, որի հանդեպ պարտքը երբեմն որեւէ խանութ գնալիս կամ քաղաքում զբոսնելիս եկեղեցու կողքով անցնելու դեպքում ներս մտնելը եւ մոմ վառելն է, որպեսզի իրենց գործերը հաջող լինեն:

*Շարունակությունը՝ էջ 6*

Գեւորգ Զ ՉՈՐԵՔՉԵԱՆ
Կաթողիկոս Ամենայն Հայոց
(ծն. 1868, կթղ. 1945-1954)

# «ՔԱՋԱԼԵՐԵՑԱՐՈ՛ՒՔ, Ե՛Ս ԵՄ, ՄԻ՛ ԵՐԿՆՉԻՔ» (Մատթ. ԺԴ 27)

35 տարի սրանից առաջ, 20 տարեկան մի երիտասարդ՝ գաղափարական մթնոլորտում սնուած ու մեծցած, տարուած ապագայի յոյսերով, ապագայ, որ այնքան գրաւիչ գոյներով է պատկերանում երիտասարդական վառ երեւակայութեան մէջ, կեանքի բարին ու չարը չճաշակած, առի ոտքս գիտութեան տաճարի շէմքից եւ փորձեցի կոխել սրբութեան տաճարի շէմքը:

Նոր կոչմանս պարտքի գիտակցութիւնը՝ որպէս ծանր բեռ, ընկճեց հոգիս, ծնկ-



ներս թուլացան, եւ ես կանգ առի՝ կարօտ յուսադրող ձայնի: Ես յիշեցի Աւետարանի խորհրդաւոր եւ հրաշալի պատկերը՝ Յիսուս ջրերի վրայ...

Մռայլ գիշեր, մրրկածուփ կատաղի ծով, փրփրադէզ ալիքներին խաղալիք դարձած մի խեղճ նաւ եւ մէջը յուսահատութեան ծայրը հասած Պետրոս առաքեալին իր ընկերներով: Իսկ անդին՝ Մարդոյ Որդին, որ անվրդով քայլում էր ծովի անդունդի վրայ: Նա նոր էր իջել սրբութեան սարից, ուր ժամեր շարունակ աղօթքի եւ առանձնութեան մէջ էր անցրել Իր Հօր հետ: Նա Իր յուսադրող ձայնով կենդանութեան շունչ փչեց ընկճւելու մօտ հոգիներին. «Քաջալերեցարո՛ւք, Ե՛ս եմ, մի՛ երկնչիք»:

Անցան 35 տարիներ, կեանքի ծովի կատաղի ալիքները կոհակ-կոհակ բարձրացան, լեռնացան եւ խեղդել փորձեցին իմ հոգուս բարոյական կենդանութեան սաղմերը, բայց դեռ հնչում էր ականջումս Փրկչի յուսատու ձայնը՝ «Քաջալերեցարո՛ւք, Ե՛ս եմ, մի՛ երկնչիք»: Նա կանգնած էր իմ առաջ Իր տիրական դէմքով, որին ե՛ւ ծովը, ե՛ւ հողմը հնազանդում են, եւ առիւծաբար մռնչող կատաղի ալիքները լռում եւ խոնարհ գառնուկների նման փարում Նրա ոտքերին, նեցուկ դարձաւ ինձ, եւ իմ «Տէ՛ր, փրկեա՛ զիս» բացականչութեան ի պատասխան՝ մեկնեց Տէրը Իր ազատարար ձեռքը եւ փրկելով՝ կեանքի ծովի ալիքների վրայ շրջել սովորեցրեց եւ ահա այդ մարզանքների շնորհիւ մաքառման մէջ դիմացկուն եւ յուսահատուող դարձրեց:

Եւ երբ կրկին բացուեցան առաջս սրբութեան տաճարի դռները, կրկին առիթ ներկայացաւ կոխելու նրա շէմքը, այլեւս հոգիս չթուլացաւ, ծնկներս չծալուեցին, որովհետեւ երկար տարիների ընթացքում կեանքի փորձն ու մաքառումը եւ Փրկչի յուսատու ձայնը վստահութիւն ներշնչեցին ինձ դէպի իմ ոյժերը եւ համարձակութիւն տուին առանց վախի աշխատելու հոգեւոր ասպարիզում՝ հաւատալով, որ Փրկչի լուծը քաղցր է, եւ բեռը՝ փոքրոգի, եւ որ Նա Իրեն ապաւինողներին անօգնական չի թողնի:

Հայ եկեղեցական կեանքը այսօր Թիֆլիզում ալեկոծուել է, եւ Հայ Եկեղեցու նաւը կատաղի ալիքների է ենթակայ, ինչպէս երբեմն Պետրոսի նաւը՝ Գեննեսարեթի ծովակում: Գիտեմ, հաւատացեալ եղբայրնե՛ր եւ քոյրեր, ձեր սրտերը վտանգի վախով են լցուած, ինչպէս երբեմն իմ սիրտը, ինչպէս երբեմն Պետրոսի եւ ընկերների սրտերը: Յիշեցէ՛ք Տիրոջ խօսքերը՝ Իր աշակերտներին ուղղած, եւ կը զօրանաք. «Մի՛ խռովեսցին սիրտք ձեր եւ մի՛ զանգիտեսցեն, այլ հաւատացէ՛ք յԱստուած եւ յի՛ս հաւատացէք» (Յովհ. ԺԴ 1, 27):

Տէ՛ր իմ, ինչպէ՞ս չխռովի սիրտս, երբ եղբայրներս Միածնական Տաճարի հիմքերը խախտելու փորձեր են անում: Ինչպէ՞ս չվրդովի հոգիս, երբ իմ հարազատները, մոռացած սբ Լուսաւորչի զարթուցիչ ձայնը՝ «Եկայք շինեսցուք սբ զխորանն լուսոյ», մարել, հայ մարդու սիրտը ջերմացնող եւ կապող միակ հաստատութեան տաքութիւնը խլել եւ կապը կտրել են փորձում:

Ինչպէ՞ս չյուզուի իմ սիրտը, երբ իմ եղբայրները կեանքի նեղութեան ու թշուառութեան օրերին օգնութեան ձեռք մեկնելու փոխարէն վշտացնում, հարուածում եւ ալեկոծ ծովին կուր են դարձնում:

«Մի՛ խռովեսցին սիրտք ձեր»: Փրկչի հրաժեշտի ժամի խօսքերն են՝ Իր աշակերտներին ուղղած, որ ուղղում է նաեւ բոլոր հաւատացեալներին ամենուրեք եւ ամէն ժամանակ: Փրկչի մնայուն կտակն է, որ պիտի աւետուի նոր ի նորոյ իւրայիններին: Փրկչի այս խօսքերն է, որ պիտի կրկնեմ ես եւս իմ հրաժեշտի ժամին՝ «Մի՛ խռովեսցին սիրտք ձեր»:

Այո՛, թող չվախենան ձեր սրտերը. Միածնի ցուցմամբ եւ սբ Լուսաւորչի ձեռքով Արարատեան դաշտի կենտրոնում հաստատուն կանգնած ծերունի մենաստանը շատ է տեսել փոթորիկներ, շատ է ենթակայ եղել ալեկոծութիւնների, բայց միշտ էլ հաստատուն է մնացել եւ կը մնայ: Ալիքները եկել զարնուել, փշրուել եւ յետ են նահանջել: Ո՛րքան խորհրդաւոր է նրա տեսքը. նա ե՛ւ յիշեցնում է հայի կրած անցեալ վշտերը, որոնց ականատես վկան է եղել, ե՛ւ մխիթարում ու հոգի է ներշնչում՝ ասելով. «Քաջալերեցարո՛ւք, ե՛ս եմ, մի՛ երկնչիք», ես եմ ձեր վաղեմի պաշտպանը, ձեր մշտական հովանաւորը, ձեզ միշտ իր թեւերի տակ առնող, ջերմացնող ու կեանք պարգեւողը:

Պատմական այս հաստատութիւնը ապառաժ քարի վրայ է շինուած. «Մի՛ խռովեսցին սիրտք ձեր»: Սա այն հաստատութիւնն է, որի հոգեւոր զաւակները հայ կեանքի սիւները տնկեցին, հայի գոյութիւնը աշխարհիս երեսին ապահովեցին՝ տալով հայ գիր ու գրականութիւն, եւ այսպէս դրին հայի հոգեւոր եւ մտաւոր վերածնութեան սկիզբը:

Նրա արմատը հայ մարդու սրտի մէջ է հաստատուած. երբ դադարի հայ սիրտը բաբախել, կը մարի նրա զգացմունքը եւ փուլ կուգայ այդ հաստատութիւնը, եւ նրա փլատակումը ահաւոր կը լինի հայի համար: «Մի՛ խռովեսցին սիրտք ձեր»:

Մեծ է այդ հաստատութեան բարոյական ոյժը: Ես աչքովս տեսայ այն մեծ ոգեւորութիւնը, հայի զգացմունքների ծովանալը, որ տեղի ունեցաւ համազգային մեծ տօնի օրերին՝ գրերի գիւտի տօնին: Մեր պապերի մնայուն յուշարձանները, Սբ Էջմիածնին գլուխ ունենալով, ընդհանուր ոգեւորութիւն յառաջ բերին ե՛ւ հայ մտաւորականի, ե՛ւ հայ ժողովրդի, ե՛ւ հայ հոգեւորականի մէջ հաւասարապէս:

Մեծ է այդ հաստատութեան հմայքը հայ գեղջուկ ժողովրդի մէջ, որ տեսայ ես այս աշնան սրբալոյս Միւռոնի օրհնութեան հանդէսին եւ տօնական օրերին: Մի հաստատութիւն, որ կանգնած է բարոյական հիմքերի վրայ, նա ամուր է եւ դիմացկուն. «Մի՛ խռովեսցին սիրտք ձեր»:

Շարունակությունը՝ էջ 7

# ԽՈՒՃԱՊԻ ՎԱՆՔԸ «ԽՈՒՃԱՊԻ» ՄԵՋ Է

Խուճապի վանքը գտնում է պատմական Գուգարաց աշխարհի Բողնափոր գավառում, այժմ՝ Թումանյանի շրջանի հյուսիսարեւմտյան սահմանամերձ մասում՝ Լալվարի լանջի թավուտ անտառի մեջ: Նախկինում վանքին մոտիկ եղել է նաեւ համանուն գյուղ:

Խուճապի վանական համալիրը թվագրված է որպես 13-րդ դարի կառույց, բայց դա հավանաբար վերաբերում է ավելի ուշ կառուցված ենթակառույցներին, քանի որ միանավ դահլիճից քիչ հեռու առկա են ավելի վաղ շրջանի կառույցների մնացորդներ:

Հուշարձանի գլխավոր կառույցը մեծ եկեղեցին է: Այն իրենից ներկայացնում է արեւելք-արեւմուտք ձգված ուղղանկյուն գմբեթավոր դահլիճ: Գմբեթը հենվում է մույթերի եւ ավագ խորանի եզրային մասերն իրար կապող կամարների վրա (ինչպես Դսեղի Սուրբ Գրիգոր Բարձրաքաշ, Ախթալայի Սուրբ Աստվածածին եւ այլ եկեղեցիներին): Արտաքուստ այն կառուցված է ֆելզիտային տուֆի սրբատաշ քարերով, իսկ ներսը վարպետորեն հարդարված է աղյուսով: Եկեղեցին զույգ մույթերով գմբեթավոր հորինվածք է: Մույթերը միակտոր քարից են, ութանիստ: Խոր նախաբեմով աբսիդն ունի եռանկյունաձեւ խորշերով մշակված, արեւելյան ճակատում բացվող երեք լուսամուտ: Ճակատներում, հատկապես հյուսիսայինում, մեծ մակերեսով քայքայված ու պոկված են երեսաքարերը: Քիվերը պատված են հյուսածո զարդամոտիվներով՝ մեծ մասամբ քայքայված: Ծածկասալերից մնացել են միայն առանձին կտորներ:

Մուտքերը երեքն են՝ արեւմուտքից, հյուսիսից եւ հարավից: Գմբեթի 12-նիստանի կամարաշարով զարդարված բարձրադիր թմբուկի յուրաքանչյուր նիստում նեղ եւ բարձր լուսամուտ է: Կամարներից վերեւ եւ կամարամիջոցներում քանդակված են կենդանակերպ ֆիգուրներ կամ միայն գլուխներ:

Եկեղեցուն, արեւմտյան ճակատի ողջ երկարությամբ, կից է սրահ-գավիթը:

Հուշարձանն ունի դեկորատիվ հարուստ հարդարանք:

Հուշարձանախմբի մեջ են մտնում նաեւ միանավ դահլիճը եւ մեծ ու փոքր բազմաթիվ



օժանդակ կառույցներ: Օժանդակ կառույցներից մեկը, որի ծածկը փլվել է ու մեծ փոս առաջացրել գլխավոր եկեղեցու կամարակապ գավիթի առջեւ, իր ցածրադիր դիրքով նման է ներքնահարկի:

Հարավային եւ արեւմտյան ճակատներին՝ զույգ պատուհանների հետ համադրված, գտնվում են մեծ ձգվածությամբ խաչեր:

Խուճապի վանական համալիրը Լոռու մարզի հուշարձանների պետական ցուցակում հաշվառված է Պրիվոլնոյե համայնքի կազմում, որից հեռու է 23 կմ: Ջիլիզա համայնքից՝ ուղիղ գծով՝ 5 կմ է, իսկ անտառային ճանապարհով՝ 9 կմ:

Ըստ հուշարձանների պահպանության եւ օգտագործման ՀՀ օրենսդրության պահանջների՝ համայնքը եւս պարտավորություն ունի իր տարածքում գտնվող հուշարձանների պահպանության առումով (խնամք, վարչական հսկողություն եւ այլն):

Այս դեպքում դա անհնար է, քանի որ բացի վերոհիշյալ 23 կմ-ի վայրիվերումներով անցնող ավտոճանապարհի դժվարություններից հաղթահարումը (եթե կարելի է այն ճանապարհ անվանել... եւ մոտ 1 կմ էլ բարձր է ծովի մակերեւույթից...), դեռ պետք է հատել հարեւան պետության սահմանը (իհարկե՝ համապատասխան ստուգումից հետո)՝ հուշարձանին հասնելու համար...

Քանի որ Ջիլիզա համայնքից այն ավելի մոտ է՝ ոչ միայն հսկելն է ավելի հարմար, այլեւ 5 կմ ճանապարհի անցկացման կամ 9 կմ-ի նորոգման խնդիրը:

Բացի վերոհիշյալ համայնքներից՝ Խուճապի վանքին մոտ են Վրաստանի կազմում գտնվող Ախքյորփի (3 կմ), Չանախչի եւ Խոժառնի (10-ական կմ) հայաբնակ համայնքները:

Այս համայնքից եւս, հատկապես սարն ի վեր բարձրացող հատվածում, ավտոճանապարհը կրկին անցնում էր խորխորատներով ու խանդակներով...

Մեզ տանջում էր այն միտքը, թե ինչո՞ւ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հայկական պատմաճարտարապետական այս հրաշալի կոթողին պետք է այցելել հարեւան հանրապետության սահմանի հատումով (հիշեցնելով՝ Աղդամով Ստեփանակերտ գնալը...), եւ ինչո՞ւ է միջպետական սահմանն այսքան անկանոն ու անտրամաբանական վերաձեւված...

Այս վերաձեւմանը նպաստել է 1938 թ. ԽՍՀՄ (ստալինյան) միջամտությունը, որը «Գյուղացին ու Արջը» առակի նման՝ մեզ թողել է անտառն ու քարերը... նրանց՝ այգիներն ու բացատը...

Հայաստանի ու Վրաստանի միջեւ այժմ ընթանում է միջպետական սահմանի ճշտման գործընթացը, եւ հույս ունենք, որ հաշվի կառնվի նաեւ այս խնդիրը...

Խուճապը խուճապի մեջ է իր երկրի մարդկանց եւ իր հոգեւոր հոտին հասու չլինելու պատճառով (ինչպես՝ սահմանամերձ Ջիլիզա համայնքի Խորակերտը, Բազաբերդը եւ այլն):

Այնուամենայնիվ՝ վանքը մեզ է թողնված՝ իր վեհաշուք ու հպարտ կեցվածքով՝ ոչ մեծ ու միակ բացատում կանգնած...

Խուճապի վանքը, համեմատաբար, ավելի վատ վիճակում չէ, քան ոչ սահմանամերձ տարածքներում գտնվող մյուս հուշարձանները, եթե հաշվի չառնենք անկանոն աճած ծառերն ու թփերը, մեծ եկեղեցու անսալահատակ սրահը, օժանդակ կառույցների թաղածածկ փլվածքները եւ այլն:

Հույսով ենք, որ առանց սահմանահատման՝ Խուճապի վանքն այցելելու կարճ ճանապարհի խնդրի լուծմամբ (թեեւ բարվոք վիճակում չէ նաեւ Ալավերդի-Ջիլիզա հատվածը...) առավել ուշադրության կարժանանա համալիրը եւ մատչելի կդառնա ուխտավորների եւ զբոսաշրջության սիրահարների համար: Իսկ հետագայում կարող ենք խորհել նաեւ նրա վերականգնման հնարավորությունների մասին, մանավանդ որ վանքը սահմանամերձ գոտում է եւ ապահովագրված չէ ոտնձգություններից:

**Հրաչիկ ՄԱՐՈՒՔՅԱՆ**
Պատմական միջավայրի պահպանության Լոռու մարզային ծառայության գիտաշխատող

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



*Սկիզբը՝ 2006 թ. թիվ 15-17*

## Վաղ բրոնզի դարի՝ Ք. ա. 35-25 դդ. արվեստը

Ուրույն, մշակույթը բնորոշող բնագավառներից է նաեւ թրծած կավից, հազվադեպ քարից պատրաստված կենդանիների եւ մարդկանց մանրակերտ արձանիկների արվեստը, որոնց վաղագույն նմուշներն ի հայտ են գալիս վաղ երկրագործական տնտեսաձեւի կազմավորման փուլում: Ներկայումս հայտնի են մի քանի հարյուր ամբողջական կամ բեկորատված արձանիկ: Պարզունակ նատուրալիզմը (բնապաշտություն), ընդհանրացված ռեալիզմը (իրապաշտություն) եւ սիմվոլիզմը (խորհրդապաշտություն) բնորոշում են շենգավթյան մշակույթի մանրակերտ քանդակագործությունը: Վաղ բրոնզի դարի շենգավթյան մշակույթի արվեստը, սնվելով պարզունակ նատուրալիզմի սկզբունքներից, ձեռք է բերում որակական նոր հատկանիշներ: Թրծակավե կանացի արձանիկներին բնորոշ է սիմվոլիկ-սխեմատիկ կերտվածքը: Դրանք ուրվագծում տափակ-ուղղանկյունաձեւ հորինվածքներ են, որոնց գլուխը, ձեռքերը եւ ոտքերը ձեւավորված են ելուստների տեսքով, իսկ իրանը զուրկ է անատոմիական կերպարից: Փոքրածավալ այս արձանիկները հագեցված են սիմվոլիկ արտահայտչականությամբ, որոնք շեշտում են իգական սկիզբը: Նման կերտվածքով կանացի արձանիկները բնորոշ են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի, այլեւ Եվրասիայի վաղ երկրագործական եւ բրոնզեդարյան մի շարք մշակույթներին:

Հազվադեպ հանդիպող տղամարդկանց արձանիկներում նույնպես խախտված է անատոմիական ճիշտ պատկերագրությունը: Այստեղ թեեւ առկա է գլուխը, սակայն դեմքը խիստ ընդհանրական է՝ գրեթե զուրկ դիմագծային մշակումից: Ձեռքերը եւ ոտքերը նույնպես խիստ սխեմատիկ են եւ չունեն անատոմիական ճիշտ պատկերագրություն: Դրա փոխարեն Շենգավթից հայտնաբերված այս արձանիկը հագեցված է սիմվոլիկ արտահայտչամիջոցներով, ունի շեշտված անհամամասնորեն մեծ արական սկիզբ, ինչը վկայում է այդ արձանիկի պտղաբերության պաշտամունքի հետ առնչված լինելը: Վաղ բրոնզի դարի մարդակերպ արձանիկների հորինվածքը մեծ մասամբ տափակ ուղղանկյուն է: Նման հորինվածքով եւ սիմվոլիկ պատկերագրությամբ արձանիկներն ընդհանրապես բնորոշ են վաղ երկրագործական մշակույթներին, ինչպես Առաջավոր Ասիայում (Թեփե Գավրա, Չաթալ Խույուկ, Հաջիլար), այնպես էլ Հյուսիսային Կովկասում (Նալչիկ): Մարդակերպ (անտրոպոմորֆ) քանդակներով զարդարված են նաեւ պայտաձեւ զոհարանների ծայրերը եւ կենտրոնական հատվածները, որոնք մի դեպքում նատուրալիստական են, այլ դեպքերում ներկայացված են սիմվոլիկ ելուստների տեսքով:

Ընդունված տեսակետի համաձայն՝ շենգավթյան մշակույթի մարդակերպ պլաստիկան «մոդելավորվել» է որպես վաղ բրոնզի դարի սիմվոլիկ մտածողության արգասիք: Լոկ այս ոճով արձանիկների ձեւավորումը չի համապատասխանում իրականությանը, քանզի կենդանիների արձանիկներին բնորոշ են ինչպես սխեմատիկ-սիմվոլիկ, այնպես էլ ընդհանրացված-ռեալիստական ոճի կերտվածքները (Մոխրաբլուր):

Մարդակերպ պլաստիկայում ընդհանրացված-ռեալիստական ոճի լավագույն օրինակ կարող է ծառայել 2000 թ. Շենգավթի N 4 պեղավայրի II շերտի հատակի վրա՝ մակերեսից 120 սմ խորությամբ հայտնաբերված կանացի արձանիկը: Սեւ տուֆից կերտված փոքրածավալ արձանիկը պատկերում է կանացի մերկ մարմին: Քարը մշակվել է հղկման, փորագծման եւ կետազարդման տեխնիկայով: Չնայած իր փոքր չափերին՝ քանդակը մոնումենտալ է, խիստ տպավորիչ: Քանդակագործը, պահպանելով շենգավթյան մշակույթում ձեւավորված կանոնակարգված նորմերը, միեւնույն ժամանակ ցուցաբերել է անհատական մոտեցում: Արձանիկը զերծ է ձեռքերից, սրունքներից եւ դեմքից, իսկ գլուխը, ազդրերը եւ թեւերը ներկայացված են ելուստների տեսքով, որի շնորհիվ իր ուրվագծով արձանիկը նման է փոքրինչ ձգված հնգաթեւ աստղի: Հիանալի ձեւավորված են արձանիկի կլոր կոնքերը, փարթամ ազդրերը, նեղ մեջքը, սակայն առավել տպավորիչ են կրծքերը, որոնք զարդարված են բոլորձեւ դասավորված կետաշարերով եւ սոլյար պատկերներ՝ աստղաբույլեր են հիշեցնում: Այստեղ աստղի գաղափարը մարմնավորված է ե՛ւ արձանիկի ուրվագծում, ե՛ւ կանացի կրծքերի պատկերագրությունում: Որոշակի է, որ Հին Արեւելքում սիրո եւ գեղեցկության աստվածուհիների խորհրդանիշը եղել է աստղը, եւ թերեւս հենց «աստղ» բառից է ծագում հայոց սիրո եւ գեղեցկության հնագույն աստվածուհու՝ Աստղիկի անունը: Շենգավթից հայտնաբերված արձանիկը թերեւս աստղսեր-գեղեցկություն-Աստղիկ գաղափարների հնագույն մարմնավորումն է:

Ինչպես նշեցինք, Հայկական լեռնաշխարհի մինչ այդ հայտնի գրեթե բոլոր արձանիկներին, որոնք առանց բացառության պատրաստված են թրծակավից, բնորոշ են տափակ-ուղղանկյուն հորինվածքները եւ սխեմատիկ-սիմվոլիկ ձեւերը՝ զուրկ գեղագիտական արժանիքներից: Շենգավթի տուֆակերտ արձանիկը կերտված է կնոջ մարմնի գեղեցկությունը պատկերելու, թերեւս նաեւ այն բանաստեղծորեն ընկալելու մղումով: Հին քանդակագործը սեղմ արտահայտչամիջոցներով մարմնավորել է գեղեցիկ եւ ցանկալի կնոջ կերպարը: Նա ձգտել է ընդհանրացված-ռեալիստական ոճով վերարտադրել կանացի մարմնի անատոմիական էական հատկանիշները եւ գրավչությունը: Որոշակի է, որ քանդակագործը քաջածանոթ է եղել կանացի մարմնի անատոմիային, սակայն պահպանելով վաղ բրոնզի դարում ձեւավորված նորմերը՝ իր հիմնական ուշադրությունը դարձրել է իրանի վրա՝ շեշտելով իգության եւ պտղաբերության նշանները:

Ընդունված տեսակետի համաձայն՝ վաղ բրոնզի դարի արձանիկները եղել են տնային կուռքեր, որոնք խորհրդանշել են պտղաբերության իգական սկիզբը, մարմնավորել են մայրության գաղափարը, հովանավորել ծննդկաններին: Նորահայտ արձանիկի քանդակերտ լինելը, անատոմիական իրական կերպարը, խնամքով հարդարումը, կատարման ընդհանրացված-ռեալիստական ոճը վկայում են, որ Շենգավթի գտածոն մի առանձնահատուկ նշանակություն է ունեցել, կերտվել է պրոֆեսիոնալ վարպետի ձեռքով եւ թերեւս եղել է ողջ քաղաքի կամ թաղամասի հովանավոր սիրո ու մայրության աստվածուհու արձանիկը:



Կենդանակերպ (զոոմորֆ) արձանիկները ցլի, խոյի, շան, ձիու եւ այլ կենդանիների քանդակներ են: Դրանց մեծ մասը կատարված է պարզունակ նատուրալիստական ոճով, սակայն կենդանական տեսակները եւ ցեղական առանձնահատկությունները արտահայտված են սխեմատիկ արտահայտչամիջոցներով: Հատկապես սխեմատիկացված են ցլերի քանդակները, որոնք երբեմն ներկայանում են զույգ եղջյուրների սիմվոլիկ պատկերումով: Դրանց զուգահեռ հանդիպում են նաեւ ռեալիստական-տարածական քանդակագործության նմուշներ: Շիրակի դաշտավայրի հուշարձաններից (Հառիճ, Կառնուտ), ինչպես նաեւ Շենգավթից հայտնաբերված պաշտամունքային զոհարանները եզերվում են խոյերի հանդիսավոր ստատիկ պրոտոմներով, որոնք մոնումենտալ բնույթ ունեն: Ընդհանրացված ռեալիզմի հիանալի նմուշ է Մոխրաբլուրից հայտնաբերված մուգ վարդագույն տուֆից քանդակված խոյի արձանիկը: Այն աչքի է ընկնում մանրամասների ճիշտ փոխհարաբերությամբ: Քանդակագործը ձգտել է պատկերել կենդանու էական հատկանիշները, անատոմիական ճիշտ կառուցվածքը՝ դրանով իսկ ռեալիստական քանդակին հաղորդելով մոնումենտալություն: Այս հատկանիշների շնորհիվ խոյի քանդակը մերձենում է Առաջավոր Ասիայի ընդհանրացված ռեալիզմին բնորոշ արվեստի լավագույն գործերին:

Հետաքրքիր եւ ինքնատիպ է Մոխրաբլուրից հայտնաբերված թռչնի սնամեջ արձանիկը:

Շենգավթյան մշակույթում լայն տարածում գտած սիմվոլիկ պլաստիկան անհետանում է մշակույթի հետ միաժամանակ: Որպես հին ավանդության վերապրուկներ՝ միջին բրոնզի դարից մեզ են հասել Ուզերլիկ-թեփեից հայտնաբերված թրծակավե կնոջ արձանիկը, Կարմիր վանքից՝ տղամարդու արձանիկը եւ Լճաշենից՝ ջրային թռչունների ինն արձանիկները:

*Շարունակելի*

***Հակոբ ՍԻՄՈՆՅԱՆ***
***Պատմական գիտ. թեկնածու, արվեստաբանության դոցենտ***

# ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՍԻՐՈ ՏՈՆ

*Սկիզբը՝ էջ 4*

Մինչդեռ հռչակավոր անապատականներից Արսեն Մեծը հրաժարվեց իր խցի կողքով գնումների գնացող մի քանի վանականներին ընդունելուց, որովհետեւ նրանք չէին եկել առաջին հերթին հենց իրե՛ն այցելելու եւ հոգեւոր խրատներ լսելու մտադրությամբ: Մուսուլմանների մասին ասում են, որ նրանք իրենց սուրբ գիրքը բռնած ժամանակ միշտ պահում են կրծքավանդակի՝ սրտի բարձրության վրա՝ իբրեւ հարգանքի նշան: Չենք կարող ասել, թե մեզ մոտ Սուրբ Գրքի հետ անփույթ վերաբերվելով՝ պատռում են այն, բայց գուցե մարդիկ անում են ավելի վատը: Շատ տներում Աստվածաշունչը գտնվում է գրադարակի ցուցափեղկի ետեւում՝ ցուցադրության համար: Այսպիսին է հաճախ նաեւ Աստծո հանդեպ վերաբերմունքը. սիրում ենք, որ այն եւս «փեղկի ետեւում» լինի: Մեր շատ թերթերում երբեմն ներկայացնում են Հայ Առաքելական Եկեղեցու տոները, որոնց կողքին միեւնույն ժամանակ ներկայացվում են աստղագուշական տեսություններ: Հեթանոսա-քրիստոնեականման այսպիսի մի խառնուրդ է իրենից ներկայացնում նաեւ բազմաթիվ մարդկանց ներաշխարհը: Նախ աղոթում են եկեղեցում եւ մոմ վառում իրենց ցանկությունների իրականացման համար, այնուհետեւ եկեղեցուց դուրս գալով՝ թերթերի ընձեռած հնարավորությամբ զբաղվում են աստղագուշակությամբ, որն արգելված է Աստվածաշնչով՝ Աստծո կողմից (քանզի ըստ Աստվածաշնչի՝ գուշակություն անող կամ դրան հետեւող մարդը պիղծ է Աստծո համար): Եվ զարմանալի չէ, որ նման պայմաններում շատերի կողմից ցնծությամբ ընդունվեց սիրահարների տոնը՝ Աստծո տոնը մոռացության մատնելու հաշվին: Գուցե առարկություններ լինեն, որ սա եւս քրիստոնեական տոն է, որովհետեւ հիշատակվում է սուրբ Վալենտինը: Բայց նախ՝ նա մեր Եկեղեցու կողմից տոնելի սրբերի կարգին չի դասված եւ չի հիշատակվում մեր Եկեղեցում, եւ երկրորդ՝ այդ տոնի կողմնակիցներից գրեթե ոչ ոք չգիտե, թե ով է սուրբ Վալենտինը: Հաղորդավարները հաճախ ասում են Վալենտինո կամ Վալենտինա (կարծելով, թե կին է), որոշ հեռուստաընկերություններ այդ օրվա համար առաջարկում են Վալենտինի օր արտահայտությունը բովանդակող վերնագրով ֆիլմեր, որոնք ոչ մի կապ չունեն Վալենտինի հետ, այլ



պարզապես ներկայացնում են երկու սիրահարների ամոթալի եւ անբարոյական արկածները: Եվ սրբի մասին շատերի անտեղյակությունը ցույց է տալիս, որ նպատակը ոչ թե մեկ այլ Եկեղեցու սրբի հիշատակը հավերժացնելն է, այլ պարզապես այդ օրը յուրահատուկ կերպով ու հիանալի տրամադրությամբ անցկացնելը, սեփական զգացմունքների համար տոն սահմանելն ու այն նշելը: Մինչդեռ Քրիստոսի՝ տաճարին ընծայման տոնը նաեւ Քրիստոսի՝ Իրեն ընծայելն է մարդկանց, ովքեր Սուրբ Պողոս առաքյալի խոսքերով՝ եւս Աստծո տաճարներ են: Այսինքն՝ տերունական որեւէ տոն մարդկության հանդեպ աստվածային անսահման սիրո տոնն է: Եվ եթե երկու բաներ համընկել են միեւնույն օրը, ապա պետք է ընտրություն կատարենք: Ո՞րն ավելի վեր դասենք եւ հիշատակենք՝ Աստծո տո՞նը, ով անսահմանորեն սիրում է մարդկանց եւ տալիս է հավիտենականը, թե՞ մարդկային զգացմունքների տոնախմբությունը: Այս հարցը տալուց հետո մեկ րոպե անցկացրեք լռությամբ եւ ցանկության դեպքում կլսեք, թե ինչպիսի պատասխան է տալիս ձեր խիղճը:

*Շարունակելի*

***Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ***



*Սկիզբը՝ թիվ 17*

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ

Շուտով սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Արեւմտահայության գլխին կախված բնաջնջման վտանգը Լեռ Կամսարին դարձնում է այն քաջազնիվ հայորդիներից մեկը, որ Արամ Մանուկյանի, Արմենակ Եկարյանի ու մյուսների հետ կազմակերպում է Վանի հերոսական ինքնապաշտպանությունը: Նրա դիրքը, որ հենց իր բնակարանն էր, քաղաքի կենտրոնում էր. իր դիրքը կորցնելուց հետո Արամ Մանուկյանը միանում է Լեռ Կամսարին: Այդպիսի կազմակերպված կռիվներով միայն հաջողվեց Վասպուրականի հայությանը փրկել իսպառ ոչնչացումից: Ճիշտ է, վանեցի քաջերը հաղթեցին թուրքական կանոնավոր զորքին ու բարբարոս խուժանին, սակայն ռուսական զորքի անակնկալ նահանջից հետո հարկադրված էին գաղթել Արեւելահայաստան (ի դեպ, այս նահանջի դեմ ընդվզել եւ մի հետաքրքիր նամակով Նիկոլայ Երկրորդ ցարին իր դժգոհությունն է հայտնել հենց ռուսական բանակի հրամանատար գեներալ Վվեդենսկին (տե՛ս այդ նամակը՝ «Զիթենի» ժողովածու, Թիֆլիս, 1915):

Բախտակից վասպուրականցիներից շատերի հետ ընտանիքով գաղթեց եւ Երեւանում հաստատվեց նաեւ Լեռ Կամսարը: Այստեղ նա շարունակում էր ուսուցչությունը եւ աշխատակցում Այսրկովկասում լույս տեսնող հայկական թերթերին:

1917-ին Լեռ Կամսարը գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հրամանատարությամբ Սարիղամիշի մատույցներում կռվող Վանյան 4-րդ կամավորական գնդում էր: Սակայն 1918 թ. Դրոն, զինվորների շարքում տեսնելով եւ ճանաչելով նրան, արգելում է մասնակցել կռիվներին՝ ասելով. *«Քեզ որ մի բան պատահի, բա մեզ ո՞վ է ծաղրելու, գնա՛, ա՛յ մարդ, գնա՛, քո գործն ուրիշ է, դու քո գործով զբաղվիր»* (նույն տեղում՝ էջ 8):

1918 թ. «Հորիզոնում» Լեռ Կամսարը տպագրեց իր քաղաքական ամենասուր ֆելիետոններից մեկը՝ «Ցարը եւ Լենինը», որը հետագայում գրողի համար պիտի դառնար դժվարին հավատաքննության եւ ծանրածանր պատիժների պատճառ: Այդ ֆելիետոնում Լենինին համեմատելով բռնակալ Նիկոլայ Երկրորդ ցարի հետ՝ հայտարարում է, որ Լենինն ավելի մեծ բռնակալ է. Սիբիրը տաքացնելու ցարի տասնամյակների ջանքերը չեն տվել այնպիսի արդյունք, ինչպես հաջողվել է Լենինին: Մի քանի ամսում վերջինս այնքան մարդ էր աքսորել, որ սառուցյալ Սիբիրից արդեն «բուղ էր բարձրանում»:

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո Լեռ Կամսարը մեկնում է Պարսկաստան՝ Թավրիզ, սակայն շուտով նոր իշխանությունները նրան հրավիրում են Երեւան՝ աշխատակցելու «Խորհրդային Հայաստան» թերթին: Նա Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով վերադարձավ՝ իր ժողովրդին ազնվորեն ծառայելու, իր վերածնվող հայրենիքի վերելքին նվիրաբերվելու բուռն պատրաստակամությամբ, սակայն խորհրդային իրականությունը եւ վարչահրամայական իշխանությունը, որը չէր կարողանում աչք բացել Կամսարի մտրակող քննադատությունից, նրան դրեցին շատ անհարմար վիճակների մեջ:

1924 թ. տպագրվեցին «Անվավեր մեռելներ», իսկ 1926-ին՝ «Ազգային այբբենարան» ժողովածուները: Վերջինս լույս տեսավ Արտ. Կարինյանի խիստ բնութագրական առաջաբանով, ուր Լեռ Կամսարի՝ 1916-20 թթ. մամուլում տպված եւ այդ ժողովածուում ընդգրկված ֆելիետոնների ու երգիծական պատկերների մասին հենց բոլշեւիկ քննադատի բերանով մասնավորապես ասված է. *«Այս ժողովածուի մեջ նրանք արտացոլված են անփոփոխ, առանց որեւէ ուղղումների կամ նոր հավելումների:*

*Եվ դա շատ լավ է:*

*Որովհետեւ հենց դրա համար էլ Լեռ Կամսարի տաղանդավոր ուժով կերտված ֆելիետոնները ստանում են վավերագրերի եւ նույնիսկ կարելի է ասել իրականության բավական հարազատ, կենդանի լուսանկարների բնույթ:*

*...Նա ծիծաղում է, ծիծաղում - եւ միայն այդքան:*

*Բայց հենց իր դառն ծիծաղով նա ամենասուր քննադատության է ենթարկում անցյալի տիրակալներին: Եվ միաժամանակ, հակառակ գուցե իր կամեցողության,* արտահայտում է հայ ժողովրդի աշխատավորական լավագույն տարրերի բացասական վերաբերմունքը դեպի հայկական Տարտարենների գործը» (**Լեռ Կամսար**, Ազգային այբբենարան, Եր., 1926, էջ 5):

Սակայն, ինչպես երեւում է որոշ վավերագրերից, ստի, կեղծիքի, անարդարության դեմ անողոք պայքարի ելած երգիծաբանը կանգնած է եղել նյութական ծանր դժվարությունների ու բարոյական նվաստացումների առաջ: Սարգիս Լուկաշինը բարյացակամ վերաբերմունք էր դրսեւորել Լեռ Կամսարի նկատմամբ, որի համար էլ նախ նրան էր նվիրել հիշյալ «Ազգային այբբենարան» գիրքը՝ «Ընկ. Լուկաշինին՝ իր անկեղծ բարեկամին կնվիրե հեղինակը» ընծայականով, ապա նրան համեմատում է Հիսուսի առակի Բարի Սամարացու հետ, եւ նրան 1927 թ. նոյեմբերի 12-ին ուղղած նամակում 35 կետերով ներկայացնում է իր սոցիալական նվաստացուցիչ, անտանելի վիճակը: Բերում ենք այդ նամակից միայն մի քանի կետ.

«Ընկ. Լուկաշինին

Պատճենը՝ բոլորին, բոլորին բոլորին ...

21. Վիքթոր Հյուգոն Ժան Վալժանին վրա տասը հատորից «Թշվառներ» է գրեր: Բայց Հյուգոն որ ողջ ըլլար ու ծանոթ իմ պատմությանը՝ իր «Թշվառները» 15 հատորէ բաղկանար պիտի:

24. Ես կանգնած եմ բոլշեւիկյան ու դաշնակցական կուսակցություններեն հավասար հեռավորության վրա: Իմ գրվածքներին մեծ մասը դաշնակցությունը կծաղրի, սակայն ոչ անոր համար, իհարկե, որ բոլշեւիկները պակասություն չունեն, այլ որովհետեւ վերջինս առայժմս պակասություն չի ուզեր ունենալ ... հրապարակված:

Ես իմ գրական գործունեության ողջ տեւողությանը դաշնակցության հասցեին անուշ խոսք մը ըսած չունիմ, բայց դաշնակցությունը մեկ ժամվա մեջ ինծ պաշտոն տվավ. բան մը, որ կոմկուսակցությունը վեց տարվա մեջ չկրցավ ընել...

25. 65 անգամ Մռավյանին եմ գացեր. 39 անգամ՝ Կարինյանին, 1՝ Աշոտ Հովհաննիսյանին, 11՝ Երզնկյանին, 35՝ Շատունցին, 18՝ Կոստանյանին, 1՝ Ամիրխանյանին, 1՝ Համբարձումյանին, 4՝ Դր. Սիմոնյանին, 3՝ Պարչյանին. ընդամենը՝ 176 անգամ:

Կըսեն «սպեց» չես, որ գործ տանք:

32. Ի՞նչ մոլորություն: Մինչեւ հիմա ալ կկարծվի, թե ամենամեծ հանցանքը «բանդիտիզմն» է, ու ամենամեծ պատիժը՝ գնդակահարությունը:



*Տունը, որտեղ ապրել է Լեռ Կամսարը*

Ժամանակն է փոխել կոդեքսը: - Ամենամեծ հանցանքը գրող ըլլալ ու «տաղանդավոր գրիչ» ունենալն է, ու ամենաբարձր պատիժը սովամահությունն է՝ ընտանյոք հանդերձ:

34. Սխալ է Միքայել Նալբանդյանի սա խոսքը՝ թե «Ամենայն տեղ մահը մի է, Մարդ մեկ անգամ պիտ մեռնի»: Ո՛չ, ամեն մարդ մի անգամ չի մեռնիր. մարդ կա, որ 365 անգամ կմեռնի հասարակ, 366 անգամ՝ նահանջ տարվա մեջ:

35. Իսկ եթե օր մը պետք ըլլա Ձեզ գրել ինծի Ամերիկայեն կամ աշխարհի ամենահյուսիսային քաղաք Համմերֆեսթեն՝ իմ հասցեն է՝ Երեւան, աշխարհիս ամենաթշվառ մարդուն:

*Շարունակությունը՝ էջ 8*

---

**Գեւորգ Զ Չորեքչեան**

**Կաթողիկոս Ամենայն Հայոց (Ծն. 1868, կթղ. 1945-1954)**

# «ՔԱՋԱԼԵՐԵՑԷ՛Ք, Ե՛Ս ԵՄ, ՄԻ՛ ԵՐԿՆՉԻՔ»

## (Մատթ. ԺԴ 27)

*Սկիզբը՝ էջ 5*

Բայց այդ հաստատութիւնը՝ իբրեւ պատմական հաստատութիւն, իբրեւ անցեալի ծնունդ, նորոգութեան է կարօտում, շինարար ձեռքի պահանջ է զգում: Ուստի եւ միշտ ձայնում է նա ի սփիւռս աշխարհի ցրուած զաւակներին. «Եկայք շինեսցուք սբ գխորանն լուսոյ»: Շինելու շատ բան կայ, բայց մէկն է ամէնից կարեւորը՝ կենտրոնի վերաշինութիւնը: Հայութեան սիրտը Սբ Էջմիածինն է. իւրաքանչիւր այցելու, տեսնելով Էջմիածինը, յիշում է, թէ հոգեւոր կեանքի մի կենտրոն ունի, եւ թէ այդ կենտրոնի կենդանութիւնն ու նրա հետ կենդանի կապ պահելը նոյնչափ անհրաժեշտ է, որչափ հայի ինքնուրոյն ազգային-եկեղեցական կեանքի պահպանութիւնը:

Հայ ժողովուրդը, դարեր շարունակ ապրելով միեւնոյն կեանքով, միեւնոյն սկզբունքներով եւ միեւնոյն պատմական բախտով, ստեղծել է միութեան մի ներքին հոգե-
ւոր կապ: Ահա այդ կապը, այդ հանգոյցն է
Սբ Էջմիածինը, եւ Ամենայն հայոց հայրա-
պետը՝ կենդանի ներկայացուցիչը այդ նուի-
րական գաղափարի:
Ով բաժանուի այդ կենտրոնից, կը կորց-
նէ գոյութեան իրաւունքը եւ կեանքի նպա-
տակը, ինչպէս բնից պոկուած մի ոստ, որ չո-
րանում եւ կորչում է անհետ: Ով նպաստում
է այդ բաժանման, նա բարեկամ չէ այդ հաս-
տատութեան, նա թշնամի է հայ ժողովրդին:
Վտանգի ժամերին երկու ձայն պիտի հն-
չէ մեր ականջներում. սբ Լուսաւորչի ձայնը՝
«Եկայք շինեսցուք...», որ յիշեցնէ մեզ աշ-
խատելու, շինելու եւ յառաջադիմելու
պարտքը, որպէսզի կենդանի պահենք մեր
հոգուն սնունդ մատակարարող հաստա-
տութիւնը, եւ Փրկչի ձայնը՝ «Հաւատացէ՛ք
յԱստուած եւ յի՛ս հաւատացէք», որ վտանգի
րոպէներին մեր սրտերը չվհատին, այլ նման
այն պատանուն, որ իր հօր հետ նաւակում
անվեհեր էր նստած՝ չնայելով նաւակին
սպառնացող ծովի կատաղի ալիքներին եւ իրեն հարցնողներին, թէ ինչպէ՞ս նա անվեհեր է, պատասխանում է. «Չէ՞ որ հայրս է ղեկավարը, չէ՞ որ նա է նաւաստին, ուրեմն ինչո՞ւ վախենամ»: Քրիստոնեայ եղբայրնե՛ր եւ քոյրեր, նաեւ մեր կեանքի նաւակում նստած է մեր Հայրը, որ ղեկավարում է. եթէ մենք յիրաւի ճանաչում ենք Նրան մեր հայրը եւ մեզ՝ Նրա զաւակները եւ հաւատում ենք դրան, ապա ուրեմն հեռո՛ւ թերահաւատութիւնը, նրա փոքրոգութիւնը: Թող առաջնորդէ մեզ Տիրոջ յուսատու ձայնը. «Մի՛ խռովեսցին սիրտք ձեր եւ մի՛ զանգիտեսցեն...», եւ մենք դիմենք դէպի գործ, դէպի ինքնապաշտպանութիւն՝ հաւատով զօրացած, հաւատալով, որ անպարտելի կը մնանք:

Շնորհք եւ ողորմութիւն...

*Խօսուած է Վանքի տաճարում*
*26 դեկտեմբերի 1926 թ.*
*ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 53, թ. 1-4,*
*ինքնագիր, բնագիր*



# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ
# ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ

*Սկիզբը՝ էջ 7*

Փոշտալիոնը կճանչնա ինձի» (Այս նամակի ձեռագիրը երգիծաբանի թոռնուհի Վանուհի Թովմասյանը Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանին է հանձնել 1980 թ. ապրիլին):

Վիճակի բարելավում ոչ միայն տեղի չի ունենում, այլեւ հանգամանքներն ավելի են բարդանում: Շուտով Կենտկոմի՝ գաղափարական աշխատանքի բնագավառում կադրերի զտման որոշման հիման վրա Լեռ Կամսարը 1931 թ. «զտվում» է առաջին կարգով եւ մնում բոլորովին անգործ: Պահպանվել է նրա մի խիստ բնութագրական նամակ-դիմումը՝ «ՅՍԽՅ բանգյուղտեսչության զտիչ հանձնաժողովին, պատճենը՝ Կենտկոմին, պատճենը՝ պատմությանը» խոսուն վերտառությամբ:

Պարզվում է՝ «զտիչ» հանձնաժողովը դիտմամբ է ստեղծվել Լեռ Կամսարին մտերիմ մարդկանցից, որոնք նրան «զտելուց» բացի այլ ելք չունեին, եւ իրենց ճակատագիրն էլ իրենց վերաբերմունքից էր կախված (ճիշտ նույն սկզբունքով հետագայում Ե. Չարենցի դեմ էին դուրս բերում նրա մտերիմներին): Յենց Լեռ Կամսարի ազնիվ բողոքից երեւում է, որ այդ մարդիկ՝ ժամանակի մեծագույն գրողները, նրա հանդեպ այնուամենայնիվ դրսեւորել են հնարավոր ամենաբարյացակամ վերաբերմունք, որը վիրավորված ու դառնացած գրողը եւ նրա հարազատները չէին էլ կարող ո՛չ այդ պահին եւ ո՛չ էլ հետո ճիշտ ընկալել: (Այսպիսի տպավորություն էինք ստացել Լեռ Կամսարի զավակների՝ Աշոտի եւ Նաթանի հետ 1970-ական թթ. զրուցելիս: Իրենց կասկածները նրանք հաղորդել էին նաեւ բանաստեղծ Յովհ. Շիրազին: 1920-30-ական թթ. իրականությունն ինձ լավ էր ծանոթ այդ ժամանակների զոհեր Ե. Չարենցի, Ա. Բակունցի եւ մանավանդ նրանց հետեւողական պաշտպան Յարություն Սուրխաթյանի մասին թեկնածուական ատենախոսություն գրելու հանգամանքով: Իմ փաստացի ապացույցներից ու բացատրություններից հետո նրանք այլեւս չէին մեղադրում «զտիչ» հանձնաժողովի անդամներին: Սակայն ահա «Կարմիր օրեր» գրքի առաջաբանի հեղինակը՝ երգիծաբանի թոռնուհի Վ. Թովմասյանը, ինչպես երեւում է, տեղյակ չի եղել մեր զրույցներին եւ պնդել է, թե խորհրդահայ գրողներն են նախաձեռնել Լեռ Կամսարի «զտումը». «1931 թ. խորհրդահայ գրողների **համերաշխ նախաձեռնությամբ** սկսվեց Լեռ Կամսարի «զտումը» կամ «Այսպիսով, հայ խորհրդային գրողները «մաքրեցին» իրենց շարքերից «**ազգի եւ հայրենիքի թշնամի**» Լեռ Կամսարից եւ, ազատելով նրան աշխատանքից, փաստորեն դատապարտեցին սովամահության, քանի որ նա այդ պիտակով արդեն չէր կարող որեւէ ուրիշ աշխատանք գտնել»,- գրել է նա «Կարմիր օրերի» առաջաբանում (էջ 10-11): Այս տեսակետին դժվար է համաձայնել, որովհետեւ, մեղմ ասած, թյուրիմացության հետեւանք է. այդ հանձնաժողովը ոչ թե գրողներն իրենք էին ստեղծել, այլ ՅՍԽՅ բանգյուղտեսչությունն էր նպատակադրված կազմել հատկապես այդ գրողներից: Նույն Ակսել Բակունցն ու Եղիշե Չարենցը ընդամենը մի քանի տարի հետո ոչնչացվեցին նույն պետության համապատասխան մարմինների ձեռքով):



*Լեռ Կամսարի տունը Երեւանում*

Ահա ՅՍԽՅ բանգյուղտեսչության կազմած հանձնաժողովի զտիչ եռյակը՝ **Սիմակ Սահակյան, Եղիշե Չարենց եւ Ակսել Բակունց:** Յասկանալի է՝ նրանք կամավոր չէին ընդգրկվել այդ հանձնաժողովում, այլ նրանց պարտադրել էին, իսկ հրաժարվելը հենց նրանց համար կունենար անցանկալի հետեւանքներ:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***

***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԼՈՒՐԵՐ Կալկաթայից

## Հայաստանի Հանրապետության անկախության տոնը Հայոց Մարդասիրական ճեմարանում

Սեպտեմբերի 21-ին Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորապես նշվեց Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակը: Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տոնական միջոցառումն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որին հաջորդեց ՀՀ օրհներգը: Այնուհետեւ աշակերտներին ողջունեց եւ օրվա առիթով շնորհավորեց ճեմարանի տնօրեն Ջեյմս Դայաարը՝ անդրադառնալով անկախության հասկացության նշանակությանը յուրաքանչյուր ազգի կյանքում: Հայաստանի անկախության առիթով ներկաներին ուսանողության անունից ողջունեցին նաեւ ճեմարանականներ Սարինե Նիկողոսյանը եւ Արաքս Քեշիշյանը: Հանդիսությունը վարում էր Միրանուշ Մուրադյանը:

ՀՀ անկախության ձեռքբերման պատմությանը եւ նրա նշանակությանը թեմայով բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի հայ ժողովրդի պատմության ուսուցիչ տիար Մարտիկ Սարգսյանը: Նա իր ոգեշունչ խոսքում հատկապես ընդգծեց, որ անկախությունը ձեռք է բերվել նվիրյալ հայորդիների արյան եւ մեր ժողովրդի հավաքական կամքի արտահայտման շնորհիվ, ուստի մեր պարտքն է պահպանել այն:

Երաժշտության ուսուցիչ Վաչագան Թադեւոսյանի ղեկավարությամբ ճեմարանի երգչախումբը կատարեց ազգային-հայրենասիրական երգեր, ճեմարանականները նաեւ ասմունքեցին եւ պարեցին: Հատկապես նշանակալից էր Մարդասիրական ճեմարանի սաների ոգեւորությունը եւ ազգային պատկանելիության բարձր գիտակցությունը բանաստեղծությունների արտասանման ժամանակ: Լինելով հայրենիքից հեռու՝ հայրենաշունչ բանաստեղծությունների միջոցով նրանք գովերգում էին դրախտավայր Հայոց աշխարհն ու երդվում, որ ամեն ինչ պետք է անեն իրենց լուման ունենալու հայրենիքի շենացման եւ բարգավաճման սրբազան գործում:

ՀՀ անկախության առիթով իր սրտի խոսքն ասաց նաեւ ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը՝ հորդորելով ամենքին հավատարիմ մնալ հայ մարդու ինքնությանը, մեր անկախ Հանրապետությանը, մեր մայրենի լեզվին եւ Հայոց Եկեղեցուն, որոնց շնորհիվ ենք մենք հայ կոչվում եւ գոյատեւում աշխարհում:

Մի քանի ճեմարանականներ նաեւ ընթերցեցին «Հայաստանի անկախությունն ինձ համար» թեմայով գրված շարադրությունները, որոնք ներկաների կողմից ջերմ ընդունելության արժանացան:

Հանդիսության ավարտին եզրափակիչ խոսքով հանդես եկավ ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Շնորհավորելով ամենքին՝ հայր սուրբը զուգահեռներ անցկացրեց անկախության համար երկար ժամանակ պայքարած հնդիկ եւ հայ ժողովուրդների անցած ուղուն՝ ընդգծելով, որ մայր հայրենիքի անկախության պահպանումն ու բարգավաճումը կախված է մեզանից յուրաքանչյուրից:

# ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ
# ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կեղծ աստվածպաշտությամբ ապրող մի կին գիշերուզօր աղոթում էր եւ անդադար այցելում ուխտատեղիներ: Նման կարծեցյալ առաքինությամբ ապրելով՝ նա մարդկանցից բազմաթիվ իրեր էր վերցնում եւ շատ ու շատ ոսկեղեն հավաքում: Աստվածասեր քրիստոնյաներն ինչ որ տալիս էին քրիստոնյա գերիներին ազատելու համար, նա քսակի մեջ էր դնում, իսկ ինչ էլ տալիս էին կարոտյալների պետքերի համար՝ արկղի մեջ էր պահում: Այդ կինն իր սենյակում խոր փոս էր փորել եւ մի մեծ կարաս տեղադրել այնտեղ: Իրեն վստահված իրերն այդտեղ էր պահում եւ վրան էլ մի քար դնում: Ցավալի է, թե ինչպես է անիծյալ ագահությունը կուրացնում մարդկանց եւ ընկղմում խավարի մեջ:



Սակայն, կարճ ասած, երբ կարասը լցվեց դրամով, եւ կնոջ մահվան ժամն էլ հասավ, ինչպես որ մեռած էր աստվածատուր հոգով, մեռավ նաեւ մարմնով ու թաղվեց: Թաղման արարողակարգից հետո քահանաները կնոջ սպասուհուն հարցրին.

-Քո տիրուհին ի՞նչ էր անում այդքան դրամը, որ նրան էին տալիս:

Նա էլ պատասխանեց.

- Բնավ չեմ տեսել, որ աղքատներին ինչ-որ բան տար, եւ չգիտեմ, թե որտեղ էր պահում մարդկանցից վերցրած դրամը: Միայն գիտեմ, որ ինչ էլ նրան տալիս էին, սենյակ էր տանում եւ այլեւս դուրս չէր հանում: Քահանաները, այս լսելով, զարմացան եւ ջանադրաբար սկսեցին փնտրել՝ մինչեւ որ լսեցին դրամի ձայնը: Քարը գլորելով՝ մեծ քանակությամբ դրամ գտան եւ զարմանալով կնոջ խորամանկության վրա՝ այս ամենը հայտնեցին եպիսկոպոսին: Իսկ եպիսկոպոսը, սաստիկ բարկանալով, հրամայեց բացել գերեզմանը եւ ամբողջ դրամը լցնել նրա դիակի վրա՝ ասելով.

- Ինչ հավաքեցիր՝ թող քեզ լինի, իսկ Քրիստոսի աղքատներից թող ոչինչ չպակասի:

Դրանից հետո մի քանի գիշեր գերեզմանից ձայներ էին լսվում եւ խիստ լաց ու կոծ: Եվ այս ողբերի մեջ պարզ լսելի էր. «Վա՛յ ինձ՝ եղկելիիս, վա՛յ ինձ՝ ամենաթշվառիս, քանզի այս ոսկին այրում ու տոչորում է ոսկորներս»:

Այսպիսի ձայներ լսվեցին երեք գիշեր ու ցերեկ: Եվ շրջապատի մարդիկ, չկարողանալով տանել այս, գնացին քահանայի մոտ եւ բացել տվեցին տապանը: Սարսափով տեսան, թե ինչպես էր ոսկին, ասես հնոցում, հալվել, իսկ կնոջ բերանը՝ պատվել կրակե բոցով: Այնժամ քահանան աղոթեց Աստծուն, որ նրա մարմնի տանջանքները թեթեւանան, որովհետեւ նրա ժլատությունը հայտնի էր դարձել մարդկանց: Այնուհետեւ ծածկեցին գերեզմանը, եւ կնոջ ձայնն այլեւս չլսվեց:

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Յիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Յրատարակիչ՝**
«Քրիստոնյա Յայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Յամարի պատասխանատու՝**
Նարե Սարգսյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ

**հեռախոս՝ (0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 4. 10. 2006 թ.

**Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ**